




ՄԻԱՑԵԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ԶՕՐՈՒԹԻՒՆԸ



ԱՅՕ վարկեանիս աշխարհիս հզօրագոյն պետութիւնը պէտք ենք ճանչնալ Հիւսիսային Ամերիկայի Հասարակապետութիւնը: Ան արդէն կազմ և պատրաստ է վճռական քայլն առնելու և սուրը մերկացնելու Պոլոր աշխարհիս խաղաղութիւնը վրդովող, բովանդակ Հին Աշխարհն արեան ճապաղիներու մատնող պատասխանատուներու դէմ:

Բերկրաոթիթ յոյսը ամէն ընկճեալ և տատապեալ ազգերու դէմքերուն վրայ կը փայլի, ամէն միտք և աչք կը սպասեն Էտիսընի և իւր հարիւրաւոր աշխատակիցներուն մեծամեծ զիւտերուն հրապարակ ելլելը տենեն, զիւտեր՝ որոնք որքան ալ մահասփիտ և քանդիչ հանգամանքներ ունենան, այնքան աւելի երազ ըղձալի խաղաղութիւնը պիտի վերահաստատեն և պիտի ստիպեն մարդկութիւնը՝ մերձաւոր ապագային զէնքերը վար դնել ու խաղող վաճառականութեան, մտաւոր յառաջադիմութեան և խաղաղասիրական յարաբերութեանց կեանքի նոր շրջան մը ներմուծել և ծաւալել ամէն կողմ:

Ռազմական զիւտերու մասին պատկերազարդ դրուակներ հրատարակել մտադրած ըլլալով, նախ կ'օգնենք խօսիլ Միացեալ Նահանգներու անցեալ տարուան մէջ ունեցած զօրութեանը վրայ:

1916ին մէջ Միացեալ Նահանգները շուրջ 104.000 հոգիներ ունէին զէնքի տակ, որոնք ամենայն կերպով կազմ և պատրաստ զինուորներու և սպաներու

պատկանելի զօրութիւն մը կը ներկայացընէին և վարկեանէ ի վարկեան անոնց թիւը 500.000ի կարող էր բարձրանալ և ի պահանջնէ հարկին՝ մի քանի միլիոն մարդ հաւաքուիլ Ազատ Հասարակապետութեան դրօշին տակ:

Խաղաղութեան ժամանակ բունակին ցամաքային զօրութիւնը կը բաղկանար 39 զօրագունդէ (régiment). Իւրաքանչիւր զօմարտակ կը ստորաբաժնուէր 4 հետեակադասի (compagnie d'infanterie), և ամէն մէկ հետեակադաս կը բաղկանար 125 անձերէ: 3 զօրագունդ ի միասին 1500 հոգի բովանդակելով կը ձևացնէր վաշտ (brigade) մը:


Հետեակազօրքը կը զօրծածէ Springfieldի հրազէնը՝ որ թերեւ ամենէն աւելի կատարելագործեալ հրազէնն է:

Թնդանօթածիգ զինուորութիւնը կը բաղկանայ 9 զօրագունդէ. ամէն զօրագունդ կը բաժնուի 2 զօմարտակի, և ամէն զօմարտակ 3 մարտկոց կ'ունենայ՝ որոնց իւրաքանչիւրը 4ական թնդանօթներով և 12տկան մեծ արկղերով օժտուած կ'ըլլան:

Հետեակազօրաց գունդերուն պատկանող թեթև հրետանին, որ հետեակազօրքի գունդերը կ'ունենան, 3 բթամատ ներքին տրամագիծով են՝ ֆրանսացոց 75նոց (7.5 հարիւրորդամիլլր բացուածքով) տեսակին կը համապատասխանէ և սաստիկ արագահարուած է: Այժմ զանազան զօրագունդեր 4.7 բթամատ տրամագծով թնդանօթներ և ունին, և ուրիշներ 5.2

և նոյն իսկ 6 բթամատ տրամագծով Howitzers տիպարի թնդանօթներով զինուած են: Դաշտային ծանր հրետանիները մեքե-

թածիգ մարմինը 20.000 զօրականներէ կը բաղկանայ՝ որոնք ծանր հրետանիները զործածելու վարժութիւն ունին:




«Նեւ Եորք» վերա - տրէտնօթի ամբողջական տեսքը:

նական նոր փոխադրութեանց մեթոտնե-
րով կը տեղափոխուին՝ ամենայն արագու-
թեամբ:

Ծովեզերեայ զինուորութեան հրանօ-

ւմերիկեան Հեծելազօրքի կազմակեր-
պութիւնը բոլորովին եզական է և կը
տարբերի Եւրոպական ազգերու ունեցա-
ծէն: 1916ին 20 զօրագունդէ կը բաղ-

կանար, իւրաքանչիւր զօրագունդ 4 զու. (իտ. pistola) 45 սրամաշափով և հրամարտակի (իտ. squadrone) և իւրաքան. ցան. այնպէս որ հեծելազօրքը ի հարկին չիւր զուամարտակ 4 փոքր զունդի (իտ. նաև իբրև հետեակազօրք պատերազմելու



«Նեւ Եօր» վերա-տրէտնօթի յոտակողման տեսքը.

plotone) բաժնուած էր, և ունէր 80 հո. վարժ կ'ըլլայ: Յամաքային այս հեծելա. գիէ բաղկացեալ հեծելազօրք: Հեծեալը զօրքի ինչպէս նաև հետեակազօրքի իւ. կ'ունենայ սուր, ինքնաշարժ ասրճանակ բաքանչիւր զօրագունդ՝ 13ական գնդա.

կացրններ (mitrailleuse) ունին, Պէնէ, Մէրսիէ կամ Վիկիէէրս Մարսիմ տիպարներու համեմատ: Սովորական Յամաքային զօրաբաժին (division) մը 3 վաշտերէ բաղկացած կ'ըլլայ, և ամէն վաշտ 3 հետեակ զօրագունդի կը ստորաբաժանուի. զօրաբաժինը կ'ունենայ նաև զաշտային թնդանօթածիգ երկու վաշտեր, մէկ հետեակ զօրագունդ, շինողութեան (génie) մարմին, անողջպահելու բաժանում, կառայումը և կարասիներ:

Բանակին սպաները West-Pointի զինուորական Ակադեմիայէն 4 տարի ուսանելէ վերջ՝ շրջանաւարտ դուրս կու գան և տեսական ու զործնական կրթութիւններով մարզուած կ'ըլլան: Անոնք խրամներ շինելու, ձիեր խնամելու և կառավարելու վարժ են: չարքաճ կեանքի ստակ են, երկարատև քալուածք, բացօդայ և գետնամած գիշերել և խիստ կարգապահ ըլլալ գիտեն: 115 տարի առաջ Գէորգ Սուրբինկոն զայն հիմնած է և ցարդ սուած է կոսնդ, Հէնաման, Լիյ, Սթօնվելլը, Ժագսոն, Սիլուարդ և ուրիշ երեւի զօրավարներ:

Միացեալ Նահանգներու մէջ վերոյշեալ կանոնաւոր բանակէ զատ 128.000 մարդոց զօրութիւն մը ևս գոյութիւն ունի, որ Ազգային պահապան զինուորութիւն (Garde Nationale) կը կոչուի և 12 զօրաբաժիններու կը բաժնուի, և իւր ընդհանուր գիծերուն մէջ անզորակաւ երկրպագ հինուորութեան (territoriale) կը համապատասխանէ: Ամերիկեան վարչական մարմինը 10.012 մարդերէ կը ձևանայ:

Վերջին տարիներու ընթացքին մէջ Հիւսիսային Ամերիկայի ծովային զօրութիւնը ստուգիւ սիտանանք քայլերով յառաջդրինց ու գրեթէ այժմ Անգլիոյ դէմ անվեհեր մրցակից մը եղաւ: Ֆիլիստելֆիոյ մէջ 1776ին երբ թուվմաս ժէֆրասոն առաջին դրօշակը պարզեց և անզորական կառավարութեան անջատողական պայքարը սկսաւ հրատարակել՝ այն առնել ամերիկեան նաւատորմը գերազանցապէս նպաստեց

ազատ Հասարակապետութեան կազմուելու մեծ գործին. սակայն յետոյ ազգին ղեկավարները երեսի վրայ ձգած էին նաւատորմիդ յառաջդրմելու խնդիրը, այնպէս որ 1880ին, Միացեալ Նահանգներու ծովային զօրութիւնը ռազմական ճշմարտութիւն մը հազիւ ունէր: Բայց երբ գերմանները Փիլիպպեան կղզիներուն տիրապետեցին և ծայրագոյն Արևելքի մէջ Գերման և Ամերիկեան շահերը իրարու բաղիցեցան և հակառակութեան ոգին սուր հանգամանքներ սկսաւ առնուլ, Միացեալ Նահանգները փութացին տասը տարուան ընթացքի մը մէջ ահաւորապէս զօրացնել իրենց նաւատորմիդ: Իրենց ճիգերը յետոյ կրկնապատկեցին՝ երբ տեսնուած նախկին նաւատորմիկան սոսկավիթխար նահատակութիւններն ընդդէմ Ռուսական նաւատորմիկին: Ու երբ համերոպեան պատերազմը ծագեցաւ, Միացեալ Նահանգները նաւատորմիդի կողմանէ, յետ Անգլիոյ և Գերմանիոյ, երբորդ մեծագոյն զօրութիւնը կը համարուէր՝ Մեծ պետութիւններու շարքին մէջ:


Ներկայեւ Ամերիկացիք անխնջ աշխատութեամբ աւարտելով 1918ին վերջանալիք վիթխարը զրահաւորները՝ զանոնք ծով իջեցուցած են: Անոնցմով կը գերազանցեն գերմանական զօրութիւնը. անոնցմով պիտի կարենան ոճէ ընդծովայի հարուածներուն դէմ անզգայ մնալ. և անոնք արշաւելով Ռվիանոսներու արդի ծովահնչներուն դէմ, անտարակոյս ծովային վաճառականութիւնն և նանապարհորդութիւնը ջլատեալ վիճակէն պիտի ազատեն:

Այժմ Բուպայի շրջակայքը կազմ և պատրաստ շրջագայող Ամերիկեան հուժկու նաւատորմիդ զլխաւոր տարրները հետեւեալք են:

14 մեծ « dreadnought », որոնցմէ երկուքը Pennsylvania և North Carolina, 33.000 տակառաչափ տարողութիւն ունին: 12ական հրանօթներով զինուած են՝ որոնց ներքին տրամագիծը 356 հազարորդամեդ է. 22ական թնդա-

Նոթներ և ունին՝ որոնց տրամագիծը 127
հազարորդամեղր է: Ասոնք ֆրանսական
Duquesne տրեսբորեն թիչ վար մնալով,

տակառաչափի տարրդութին ունին, տաս
տասը հատ հրանոթներու տրամագիծը 356
հազարորդամեղր բացուածքով է, 21ական



«Նեվադա» Ամերիկեան զրամուտորը

աշխարհիս ամենագորաւոր զրահապատ
շոգենաւերը կը ձեացնեն:

Յետոյ կու գան *Nevada* և *Oklahoma*
երկուորեակ տրեսբորները որոնք 28.000

թնգանոթները 127 հազարորդամեղր տրա-
մաչափով են: Ասոնց կը յաջորդեն *Te-*
xas և *New York*, որոնք նախորդեն-
բէն թիչ կը տարբերին: *Arkansas* և

Wisoming գրեթէ միևնոյն տարողութեամբ են, 12 թնդանօթ ունին 305նոց և 21 հատ 127նոց, Floridaն և North-Dakotaն նախորդներէն քիչ տարբեր տարողութիւն, 10 կտոր 305նոց և 14 կտոր 127նոց թնդանօթներով զինուած են և վերջապէս Michigan և South-Carolinaն շուրջ 18.000 տակառաշափ տարողութիւն, 8 հատ 305նոց և 22 հատ 76նոց հրանօթներով զինուած են:


Այս մեծագոր և միամե վիթխարի տրևաւորներուն վրայ պէտք է աւելցնել «հեղատրեքոր» ներու տորմիլը, որ 20 զրահաւորներէ կը բաղկանան և 1900է 1906 տարիներու մէջ շինուած են, որոնց իւրաքանչիւրը 12.000 է մինչև 18.000 տակառաշափ տարողութիւն ունի և զըլխաւոր թնդանօթներու տրամագիծերը 305 և 330նոց են:

Ան՝ յիշեալ ենթատրէթնօթներու աւուաններ՝ իրենց կարևորութեան կարգով: Louisiana, Connecticut, Kansas, Vermont, Minnesota, New-Hampshire, վեցն ալ միևնոյն տիպարի կը պատկանին, 18.000 տակառաշափ տարողութիւն, չորսական հատ 305նոց, ութական հատ 203նոց, ութական 178նոց թնդանօթներով զինուած են: Virginia, Rhode-Island, Nebraska, Georgia, New-Yersey, հինգն ալ միևնոյն տիպարի կը

պատկանին, որոնք զինուած են չորսական 305նոց, ութական 203նոց, տասներկական 150նոց թնդանօթներով: Maine, Ohio, Missouri, 13.700 տակառաշափ և չորսական 305նոց, 16ական 150նոց և վեցական 76նոց թնդանօթներ ունին. և վերջապէս Alabama, Illinois, Wisconsin, Kearsage, Kentucky, Iowa, 1200 տակառաշափ տարողութիւն ունին և նախորդներուն պէս զինուած են:

Այս աւազին նաւախումբին (escadre) պէտք է աւելցնել դեռ ուրիշ 200 հատ պատերազմական փոքր միութիւններ, խուզարկիչ նաւեր, տորպիլանալածներ, սուզանաւեր (torpilleur), ընդծովեաներ և այլն, որոնք խոշոր համեմատութիւններով՝ մեծամեծ զրահաւորներու կարողութիւնները կը սաստկացնեն:

Միացեալ Նահանգաց Գոնկրէսի նոր սնօրէնութեան համաձայն՝ թէ ցամաքային և թէ ծովային բանակները շարժման զբոնեցան. նոր զօրակոչով՝ ռազմական ամէն պատրաստութիւններու փութով զլուխ տարուելը, զաշնակիցներուն մամուլէն բերկրութեամբ ողջունուեցաւ: Համաշխարհային խաղաղութեան համաժողովին մէջ՝ անտարակոյտ ազատական Ամերիկայի ձայնը մեծ կշիռ պիտի ունենայ ընկճուած ազգերուն համար: Յուսանք և մաղթենք:



Նիւ Նորք քաղաքի Ազգային պահակազօրքիմ զրահապատ ինքնաշարժ մը: